Հաստատում եմ՝

Տնօրեն՝ Գ.Ապրեսյան

Փոխտնօրեն՝ Ի.Գևորգյան

01.09.2022թ

Ուսումնական հաստատության դասղեկի աշխատանքային տարեկան ծրագիր

2022-2023ուստարի

Սյունիքի մարզ «Դաստակերտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

**3-րդ դասարանի դասղեկ՝ Մ.Մարտիրոսյան**

3-րդ դասարան
ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ(դասարանի ընդհանուր բնութագիրը)

Դասարանում սովորում է 1աղջիկ/Ավանեսովա Արքսյա Էռնեստի/ Դասարանի կրթական մակարդակընդհանուր առմամբ գնահատվում է բավարար :

Հեշտ դաստիարակվող աշակերտուհի է:

Արքսյան համարվում է վարքով օրինակելի :

2. **Ուսման – դաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում**

Դասարանի ուսմնա-դաստիարակչական մակարդակը բարձրացնելու նպատակով պետք է ակտիվացնել դպրոց –ծնող կապը: Հաճախակի հրավիրելով ժողովներ, որոնց ժամանակ կքննարկվեն ուսման և դաստիարակության վերաբերվող հարցեր: Տարիքային առանձնահատկությունը հաշվի առնելով պետք է երեխաների մոտ ձևավորել սեր հայրենիքի նկատմամբ, հարգանք ընկերոջ և մեծահասակների նկատմամբ,անձնական հիգիենայի կարևորում, առողջ ապրելակերպի կիրառումն այլն:Շատ մեծ և կարևոր է կոլեկտիվ դաստիարակությունը:

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակություն՝

Այս առումով երեխաների մոտ պետք է ձևավորել հարգանք և սեր հոգևոր արժեքների նկատմամբ:Կարելի է կազմակերպել այցելություն մոտակա որևէ հոգևոր մշակութային կենտրոն, որտեղ աշակերտը տեղում կծանոթանան հայ մշակույթին: Կազմակերպել շաբաթօրյակայդ մշակութային կենտրոնի տարածքում:

3.2Գեղագիտական դաստիարակություն՝

Գեղագիտական դաստիարակության համար կազմակերպել այցելություններ դեպի թանգարաններ կամ պատկերասրահ:

4.**Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն՝**

Սերը առ հայրենիք: Պետք է աշակերտների մոտ ձևավորել հայրենասիրություն, նվիրվածություն , անձնազոհություն և նմանատիպ գաղափարներ : Յուրաքանչյուր հասկացության վերաբերյալ տալ բացատրություն և լսել աշակերտներին թե ինչ գաղափար է կազմել այս հասկացության վերաբերյալ: Կարևոր է նաև հետաքրքրություն առաջացնել այս գաղափարի շուրջ:Դիտել ֆիլմ և քննարկել:

•

### 3.3 **Ֆիզիկական դաստիարակչություն՝**

«Առողջ մարմնում , առողջ հոգի հասկացությունն» և ինչ կարևորություն ունի մերկյանքում: Առավոտյան կատարել վարժանքներ , որը կնպաստի նրանց ֆիզիկական պատրաստվածության մակարդակի բարձրացմանը:

### **3.4 Աշխատանքային դաստիարակություն՝**

Հաճախակի կազմակերպել հանրօգուտ աշխատանքներ (դասարանի, դպրոցամերձ տարածքիմաքրում, դպրոցի մաքրուհիների օգնում) : Աշակերտին ներգրավել դասարանական և ներդպրոցական միջոցառումներին և աշխատանքներին:

### 3.5 **Բնապահպանական դաստիարակություն՝**

Կազմակերպել էքսկուրյաներ և շրջագայումներ : Ցույց տալթե ինչ կարևոր դեր ունի մեզ համար բնությունը: Դասարանում ստեղծել կանաչ անկյուն:

## 4 . **Դպրոց - ընտանիք կապը**

Հաճախակի հանդիպում կազմակերպել ծնողների հետև պարզաբանել թե ինչ միջոցներ են կիրառվում երեխային դաստիարակելու ժամանակ:Բացատրել Ծնող դպրոց կապը,քանի որ ամեն ինչի հիմքը հանդիսանում է առողջընտանիքը և առողջ փոխհարաբերությունը:

| հհ | Ուսումնական շաբաթներ | Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը | Կատարման ժամկետը | Կատարողներ |
| --- | --- | --- | --- | --- |
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | 1-ին շաբաթ | 1.Առողջ և անվտանգ կենսագործունեություն:<br>Ինչպե՞ս խուսափել համավարակից: | 02.09 | Դասվար, բուժքույր |
| 2 | 2-րդ շաբաթ | 1. Ճանապարհային երթևեկության կանոնները:<br>2. Կարգապահական կանոններ: | 09.09 | Դասվար, աշակերտներ |
| 3 | 3-րդ շաբաթ | «Ազա՛տ, անկա՛խ Հայաստան» թեմայով նկարների մրցույթ՝ նվիրված անկախության 30 ամյակին:<br>Ցուցադրում դպրոցի «Facebook.com» էջում: | 16.09 | Դասվար, աշակերտներ |
| 4 | 4-րդ շաբաթ | Ազատ ժամանակի ճիշտ, նպատակային կազմակերպում: | 23.09 | Դասվար, աշակերտներ |
| 5 | 5-րդ շաբաթ | «Շնորհավոր տոնդ, սիրելի՛ ուսուցիչ» թեմայով նկարների մրցույթ, բացիկների պատրաստում: | 30.09 | Դասվար, աշակերտներ |
| 6 | 6-րդ շաբաթ | «Ոսկեղենիկ իմ մայրենին ապրելակերպ» | 07.10 | ՄԿԱ փոխ-տնօրեն, դասվար |
| 7 | 7-րդ շաբաթ | Եկեք օգնենք միմյանց:<br>Օգնենք, որ համերաշխությունը հաղթի: | 14.10 | Դասվար, աշակերտներ |
| 8 | 8-րդ շաբաթ | «Ոսկի աշուն» թեմայով ապլիկացիաների, նկարների մրցույթ: | 21.10 | Դասվար, աշակերտներ |
| 9 | 9-րդ շաբաթ | Հարկավոր է պահպանել քաղաքավարության կանոնները: Լինենք բարեկիրթ: | 04.11 | Դասվար, ծնողներ |
| 10 | 10-րդ շաբաթ | Իմ իրավունքներն ու պարտականությունները:<br>Ես պարտավոր եմ… : Ես իրավունք ունեմ… | 11.11 | Դասվար, աշակերտներ |
| 11 | 11-րդ շաբաթ | «Ընտանիքը՝ որպես միջավայր երեխաների դաստիարակության գործում»:<br>Հարկավոր է ճիշտ սնվել, հետևել ռեժիմին:<br>Ազատ ժամանակի ճիշտ բաշխում: | 18.11 | Ծնողներ, դասվար |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 12 | 12-րդ շաբաթ | Օգնենք ձմեռող թռչուններին: | 25.11 | Դասվար, աշակերտ ներ |
| 13 | 13-րդ շաբաթ | «Ինչպես պաշտպանվել երկրաշարժից» թեմայով զրույց, տեսանյութի դիտում: Մոմավառություն: | 02.12 | Դասվար, աշակերտ ներ |
| 14 | 14-րդ շաբաթ | «Ես ձեզանից մեկն եմ» թեմայով զրույց՝ ԿԱՊԿՈՒ երեխաների նկատմամբ առանձնահատուկ վերաբերմունքի ձևավորում: | 09.12 | Բազմամաս նագիտա կան թիմի ղեկավար, դասվար |
| 15 | 15-րդ շաբաթ | Բարի՛ գալուստ, Նոր տարի, իմ նվերը թող խաղաղությունը լինի: Ամանորյա բացիկների պատրաստում: | 16.12 | Դասվար, աշակերտ ներ |
| 16 | 16-րդ շաբաթ | Ո՞վ է իմ ընկերը, ինչպե՞ս լինել լավ ընկեր: | 23.12 | Դասվար, աշակերտ. ներ |
| 17 | 17-րդ շաբաթ | Ուզում եմ նմանվել... | 13.01 | Դասվար, աշակերտ ներ |
| 18 | 18-րդ շաբաթ | Հայրենասիրական դաս ՝ «Հայոց բանակ» միջոցառում: | 20.01 | ՄԿԱ փոխ-տնօրեն, դասվար |
| 19 | 19-րդ շաբաթ | «Ստի ոտքը կարճ է լինում» թեմայով պատմություններ, զրույց-քննարկում: | 27.01 | Դասվար, աշակերտ ներ |
| 20 | 20-րդ շաբաթ | Ներողամտություն, հանդուրժողականություն: | 03.02 | Դասվար, աշակերտ ներ |
| 21 | 21-րդ շաբաթ | Գիրք նվիրելու օր /Թումանյանական օրեր/ | 10.02 | Դասվար, աշակերտ ներ |
| 22 | 22-րդ շաբաթ | Իմ մայրենի լեզուն իմ հպարտությունն է | 27.02 | ՄԿԱ փոխ-տնօրեն, դասվար |
| 23 | 23-րդ շաբաթ | Գրքեր, որ ես սիրեցի: | 24.02 | Դասվար, աշակերտ ներ |
| 24 | 24-րդ շաբաթ | «Սիրում եմ գարունը...» շարադրությունների, նկարների մրցույթ: Գարնանային բացիկների պատրաստում: | 03.03 | Դասվար, աշակերտ |
| | | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 25 | 25-րդ շաբաթ | Կոնֆլիկտների հաղթահարում: | 10.03 | Դասվար, ծնողներ |
| 26 | 26-րդ շաբաթ | Շրջակա միջավայրի պահպանում: | 17.03 | Դասվար, աշակերտներ |
| 27 | 27-րդ շաբաթ | Բացիկների պատրաստում Մայրության և գեղեցկության տոնի առթիվ: «Ի՞նչ նվիրել, ինչպե՞ս նվիրել» թեմայով զրույց: | 24.03 | Դասվար, աշակերտներ |
| 28 | 28-րդ շաբաթ | Օգնություն ԿԱՊԿՈՒ իմ հասակակցին ՝ նա ինձանից մեկն է: | 07.04 | Բազմամասնագիտական թիմ, դասվար |
| 29 | 29-րդ շաբաթ | Մոմավառություն հայոց ցեղասպանության տարելիցի առթիվ: | 14.04 | ՄԿԱ փոխ-տնօրեն, դասվար |
| 30 | 30-րդ շաբաթ | «Երազում եմ…» /շարադրություն/ | 21.04 | Դասվար, աշակերտներ |
| 31 | 31-րդ շաբաթ | Առողջ մարմնում, առողջ հոգի: | 28.04 | Ֆիզկուլտուրայի ուսուցիչ |
| 32 | 32-րդ շաբաթ | Մենք շախմատ ենք խաղում: | 05.05 | Շախմատի ուսուցիչ |
| 33 | 33-րդ շաբաթ | Հանգստանալ եմ ուզում… | 12.05 | Դասվար, աշակերտներ |
| 34 | 34-րդ շաբաթ | Բարի գալուստ, ամա՛ռ… | 19.05 | Դասվար |